

արդ ԵՍ

ԱՐԵՄՏԱՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԾՐԱԳԻ

ԳԱԼՈՒՄՍ ԿԻԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

արդ ԵՍ. Գալուստ Կիլպենկեան Հիմնարկության Հայկական Բաժանմունքը կը մեկնարկէ նպաստի նոր ծրագիր մը, քաջալերելու համար արեւմտահայերէնով մշակութային ստեղծագործութիւնը: Այս նոր նախաձեռնութեան նպատակն է ամրապնդել լեզուի եւ մշակոյթի միջեւ եղած ներքին ու հարազատ կապը. արեւմտահայերէնն է արարումի հիմնական միջոցը:

Մշակոյթներ եւ ինքնութիւններ միշտ կը զարգանան ու կը փոփոխուին, յատկապէս սփիւռքեան իրականութեան մէջ: Իւրաքանչիւր սերունդ կը ստեղծէ ի՛ր իսկ մշակութային իրականութիւնը. կը հիմնուի նախորդ իրագործումներու եւ փորձառութիւններու վրայ: Հիմնարկութիւնը կը փափաքի խթանել զարգացումի, նորոգումի եւ ինքնութեան (վերա)կերտումի այս հոսանքները, առիթ ընծայելով որ հայ ստեղծագործ միտքեր արտայայտուին որեւէ ձեւով, իրենց իսկ իրականութիւններուն համապատասխան առընչելի նիւթերով:

Կայ արեւմտահայերէնով ներգործուն եւ ժամանակակից մշակոյթ մը զարգացնելու անյետաձգելի պահանջքը: Վտանգուած լեզուի մը կենսունակութիւնը ապահովելու առաջին նախադրեալն անով մշակոյթ ստեղծելն է. մշակոյթ՝ որ երիտասարդներուն կապուած է եւ անո՛նց կողմէ կը ստեղծուի: Հայ լեզուն եւ մշակոյթը չեն կրնար գերծ մնալ միջազգային հոսանքներէն, մանաւանդ երբ ամեն օր ականատես կ'ըլլանք համաշխարհային ուժականութեան յարացոյցներու փոփոխութիւններուն, թեքնաբանական սրընթաց նորութիւններուն, կենսոլորտային աղետներուն եւ ինքնութիւններու զարգացման: Լեզուն ու մշակոյթը աշխարհին հետ շաղկապելու հրամայականը պիտի մղէ որ անոնք մնան կենսունակ եւ առընչելի:

արդ ԵՍ ծրագիրը պիտի խթանէ ստեղծագործ միտքերը՝ մշակութային արդիականութիւն մը գոյացնելու եւ արեւմտահայերէնով յղացուած նորաշունչ նախաձեռնութիւններ մշակելու: **արդ ԵՍ** ծրագիրը կը քաջալերէ որեւէ ստեղծագործ կիրարկութիւն, արտայայտութիւն, կամ ներկայացում՝ ուր լեզուն կարեւորագոյն գործօնն է: Ծրագիրները կրնան ըլլալ միջգիտակարգային եւ անլին, ներառեալ՝ գրականութիւն, երաժշտութիւն, տեսողական արուեստներ, նորարար հեռարձակումներ ինչպէս եւ որեւէ այլ արտայայտութեան միջոց: